

Գ Ր Ա Մ Ա

(Ան. Չեխովի):

—Աղա՛, ինչ որ կնիկ հրամանոցդ կուզա,— յայտնեց Նազարը:— Սհաթըմ կեղնի դուրսը կսպասէ...

Բարսեղեանը հէնց նոր էր աւարտել նախաճաշը: Լսելով տիկնոջ այցելութեան մասին, յօնքերը կիտեց և ասաց.

—Գրողը տանի նորան: Ասա, որ գործ ունի՛մ:

—Աղա, էս հինգ անգամ է, որ կուգայ: Կըսէ թէ, շատ հարկաւոր գործ ունի... Ի՛նչ մնայ կուլայ կը...

—Հըմմ... լաւ, հրաւիրիր առանձնասենեակը:

Բարսեղեանը առանց շտապելու հագաւ վերնագգեստը, մի ձեռքը գրիչ, միւսը մի գիրք առաւ, և Եւսեպի և Լեւոնի, թէ շատ զբաղուած է, մտաւ առանձնասենեակը: Այդտեղ արդէն սպասոււմ էր նորան իւր հիւրը— Բարձրահասակ, լիքը կազմուածքով մի տիկին, մտտ դէմքով և ակնոցներով, արտաքուստ շատ պատկառելի և հազնուած, աւելի քան, պատշաճ (հագած էր չորստակ տիւրնիւր, գլխին ինչ որ շիկաթե մի թուղունով զարդարուն բարձագիր գլխարկով): Տանտիրոջը տեսնելուն պէս նա աչքերը զլուխը ձգեց և ձեռներն աղաչաւորի պէս կրծքին դրեց:

—Դուք, իհարկէ, չէք լիշոււմ ինձ,— սկսեց նա տղամարդու բարձր ձայնով և հետն էլ զգալի կերպով լուզուելով:— Ես... ես բախտ եմ ունեցել ծանօթանալ ձեզ հետ Խոխոեանների մօտ... Ես— ձուովեանն եմ...

—Հա-ա-ա... ըմմմ... նստեցէք: Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

—Տեսնոււմ էք, ես... ես... — շարունակեց տիկինն աւելի ևս լուզուելով:— Դուք ինձ չէք մտաբերում...

Ես—ձուռմեանն եմ... Գիտէք, ես ձեր տաղանդի երկրպագուներէց եմ և միշտ առանձին բաւականութեամբ եմ կարգում ձեր յօդուածները... Չկարծէք, թէ ես շողօքորթում եմ, — Աստուած մի արասցէ, — ես միայն արժանի յարգն եմ մատուցանում... Միշտ, միշտ կարգում եմ ձեր գրածները: Մասամբ ինքս էլ զուրկ չեմ հեղինակ լինելուց, այսինքն, իհարկէ, ... ես չեմ համարձակուի ինքս ինձ գրող անուանել, բայց... այնուամենայնիւ ես էլ կարող եմ մի սլուտ մեղր հանել իմ փեթակից... Զանազան ժամանակ երեք մանկական պատմուածք եմ տպել, — դուք ի հարկէ, կարգացած չէք լինիլ... շատ թարգմանութիւններ ունիմ և... և իմ հանգուցեալ եղբայրս էլ աշխատակցում էր Բործին:

— Այդպէս-ս... Ըէ-է... ինչով կարող եմ օգտակար հանդիսանալ ձեր առաջ:

— Տեսնում էք... (ձուռմեանը աչքերը չռեց և կարմրատակեց): Ես գիտեմ, ծանօթ եմ ձեր տաղանդին... ձեր հայեացքին, պ. Բարսեղեան, և ես կցանկայի իմանալ ձեր կ'ործիքը, կամ աւելի ճիշտ... ձեր խորհուրդը: Ես, պէտք է ասեմ pardon pour l'expression, վաղուց չէ որ ազատուել եմ՝ ծնելով մի դրամա և ես, առաջ քան դրաքննչին ուղարկելս, կցանկայի ձեր կարծիքն իմանալ:

ձուռմեանը ջղաձգաբար, ցանցի մէջ ընկած թըռչնակի պէս, քրքրում էր զգեստի ծալքերը և վերջապէս դուրս հանեց մի բաւական հաստափոր տետրակ:

Բարսեղեանը սիրում էր միայն իւր յօդուածները, իսկ ուրիշները, երբ առիթ էր լինում կամ կարգաւ և կամ լսել, այն տպաւորութիւնն էր գործում նորա վերայ, որ կարծէք կանգնած լինի ուղիղ իւր դէմքին ուղղած թնդանօթի փողի դիմաց: Տետրակը նկատելով, նա զարհուրեց և շտապեց աւելացնել.

— Լաւ, թողէք... ես կ'կարդամ:

— Պ. Բարսեղեան, — թախծալից ասաց ձուռմեանը, տեղից ելնելով և աղօթաւոր ձեռքեր սարքելով: — Ես գիտեմ, դուք զբաղուած էք... ձեր իւրաքանչիւր ըրպէն թանգ է, և ես գիտեմ, այս ըրպէին մտքով ինձ սատանայի գոգն էք ուղարկում, բայց... բարի եղէք, թող

տուէք ինձ հէնց այժմ կարդալ իմ դրաման... բարի եղէք, խնդրեմ:

— Ես շատ ուրախ եմ, — կմկմաց Բարսեղեանը, բայց տիկին, ես... ես շատ զբաղուած եմ... Ես... ես այժմ տեղ պիտի երթամ:

— Պ. Բարսեղեան, — հեծծաց տիկինը և նորա աչքերը լցուեցան արցունքով: — Ես զոհաբերութիւն եմ պահանջում: Ես պրտկերես եմ, ես սատանի-ծամոն եմ, բայց վհահանձն եղէք, խնդրեմ: Վաղը ես այստեղից հեռանում եմ, և ես այսօր իսկ կցանկայի ձեր կարծիքն իմանալ: Կէս ժամ ինձ նուիրեցէք ձեր ուշադրութիւնը... Կէս ժամ միայն: Աղաչում եմ ձեզ:

Բարսեղեանը «փալատ» մարդ էր, չէր կարողանում ոչ ոքի մերժել: Երբ նորան այնպէս թուեցաւ, թէ տիկինը պատրաստուում է արտասուելու և իւր առաջը չոքելու, նա շփոթուեցաւ և փնթփնթացրեց անորոշակի.

— Լաւ-աւ... հրամեցէք... ես կլսեմ... Կէս ժամ... Պատրաստ եմ:

Ճոռոմեանը ուրախ բացականչեց, գլխարկն առաւ և հանգիստ տեղաւորուելով, սկսեց կարդալ: Սկիզբը կարդաց թէ ինչպէս ծառան և աղախինը շքեղ ընդունարանը կարգի բերելու ժամանակ, երկար ու բարակ խօսում են օրիորդ Սաթենիկի մասին, որ գիւղում դպրոց և հիւանդանոց է հիմնել և կառուցել: Ծառայի դուրս գնալուց յետոյ աղախինը մի երկար մենախօսութիւն է արտասանում այն մասին՝ թէ ուսումը — լոյս է, իսկ տգիտութիւնը՝ խաւար, յետոյ Ճոռոմեանը նորից ընդունարան է բերում ծառային և ստիպում, որ սա էլ մի երկար մենախօսութիւն արտասանէ տիկին-գնդապետի մասին, որ տանել չէ կարող իւր աղջկայ գաղափարները, ուզում է նորանամուսնացնել պաշտական կրտսեր սենեկապետի հետ և համոզուած է, որ ժողովրդի փրկութիւնը միայն ծալրահեղ տգիտութեան մէջ է: Յետոյ, երբ ծառան դուրս գնաց, գալիս է ինքն օրիորդը և յայտնում հանդիսականներին, որ ինքը ամբողջ գիշեր չէ քնել, այլ մտածելիս է եղել գիւղական խեղճ ուսուցչի որդու Վալենտինի մասին, որ օգնում է ձրիապէս իւր հիւանդ հօրը: Վա-

լենտինը կլանել է բոլոր գիտութիւնները, բայց չէ հաւատում ոչ բարեկամութեան, ոչ իրոյ, կեանքի մէջ ոչ մի նպատակի չէ տեսնում և ծարաւի է մահուան ուստի և ինքը՝ օրիորդը պարտաւոր է փրկել նորան:

Բարսեղեանը լսում և թախծալից լինում էր իւր փափուկ գահաւորակը: Նա չարութեամբ դիտում էր ձուռմեանին, զգում էր, թէ ինչպէս նորա տունական հաստ ձայնը զարկում էր իւր թմրկաթաղանթին, ոչինչ չէր ըմբռնում և մտածում էր:

«Ո՞ր ստատանան բերեց քեզ... Շատ պէտքս է լսեմ քո զառանցանքներիդ ու ցնդաբանութիւններիդ... Ե, լաւ, ես ինչով մեղաւոր եմ, որ դու գրամա ես գրելի Ախ, Տէր Աստուած, ինչ էլ մեծ տետրակ է... Այ պատիժ...»

Բարսեղեանը նախեց պտտին, որտեղից կախած էր իւր ամուսնու նկարը և մտաբերեց որ կինը պատուիրել էր գնել և ամառանոց տանել հինգ արշին երկզ, մի գրուանքայ պանիր և տտամի փոշի:

«Զլինի, յանկարծ երիզի նմուշը կորցնեմ», մտածում էր նա, «ուր խոթեցի: Կարծեմ կուտաւուն կրկնոցիս գրայոնը դրի... Իսկ անզգամ ճանճերն արդէն էլի բազմակէտերով զարդարել են կնոջս պատկերը: Պէտք է պտտուիրել աղախնին, որ լուսամուտները լուանայ... ԺՖ. տեսիլն է կարդում, կնշանակէ շուտով առաջին գործողութիւնը կը վերջանայ: Միթէ այսպիսի շոքերին, այն էլ այսպիսի մարմնակողմով, ինչպէս այս մաացուինն է, հնարաւոր է ոգևորուել: Իրամա գրելու տեղ աւելի խելօքութիւն չէր տնիլ մածնափրթոշ ուտէր, ու երթար մառանում մեկնուէր...»

—Արդեօք ձեզ այնպէս չի թւում, որ այս մենախօսութիւնը մի քիչ երկար է,—յանկարծ, աչքերը տետրակից կտրելով, հարցրեց ձուռմեանը:

Բարսեղեանը չէր լսել մենախօսութիւնը: Նա այլ լալուեցաւ և այնպիսի մի ձայնով, որ կարծէք՝ ոչ թէ դիմացի տիկինն էր գրել այդ մենախօսութիւնն, այլ ինքը,—ասաց:

—Ո՛չ, ոչ, ամենն ին... ընդհակառակը, շատ լաւ է...

ձոռոմեանի դէմքը ուրախութիւնից փայլեց և շարունակեց ընթերցումը.

— Օր. Սաթննիկ, — Դուք վերլուծութեան գերի էք դարձել: Դուք շատ կանուխ էք սկսել ապրել առանց զգացմունքների ու սրտի և մտքին հաւատացել: — Վալննտին. — Ինչ բան է սիրտը: Մարդակազմական մի ըմբռնում: Ինչպէս մի պայմանաւորեալ եզր, որ զգացում է կոչւում, ես այդ չեմ ընդունում: — Օր. (շփոթուելով). Իսկ սէրը: Մէթէ նա էլ զաղափարների զուգորդութիւն է: Ասացէք առանց թագցնելու՝ երբ և իցէ սիրել էք: — Վալննտին. (դառնացած). Հին, դեռ ևս չսպիացած, վերքերին ձեռք չտանք (լռութիւն): Ինչի մասին էք մտածում այդպէս խորասուզուած: — Օր. Սաթ. — Կարծում եմ որ դուք դժբաղդ մարդ էք...

ԺԶ. րդ տեսիլի ժամանակ Բարսեղեանը յօրանջեց և անզգուշաբար տտամներով այնպիսի մի ձայն հանեց, որպիսին հանում են շները՝ ճանճ բռնելիս: Նա սաստիկ վախեցաւ իւր այդ անբաղաժար ձայնից և որպէս զի մի կերպ թագցնի, վերին աստիճանի սիրալիւ ուշագրաւ դէմք ընդունեց:

«ԺԵ տեսիլ... Ե՛րբ պիտի վերջանալ: մտածում էր նա: Ա՛խ, Տէր Աստուած, եթէ մի տասն ըոպէ էլ շարունակուի այս տանջանքը, ես օգնութեան կկանչեմ... Անտանելի է»:

Բայց ահա, վերջապէս, տիկինն սկսեց աւելի աւելի արագ և աւելի բարձրաձայն կարգալ և արտասանեց «վարագոյրը»:

Բարսեղեանը մի փոքր շունչ քաշեց և հէնց այն է ուզում էր ելնել, ձոռոմեանը թերթը շրջեց և ըսկսեց կարդալ:

— Երկրորդ գործողութիւն: Բեմը ներկայացնում է գիւղական փողոց: Աջ կողմը դպրոց, ձախ՝ հիւանդանոց: Վերջինս ոսնդողտների վրայ նստած են գիւղացիք և գեղջկուհիք:

— Ներողութիւն... — ընդհատեց Բարսեղեանը: — Ընդամենը քանի գործողութիւն է:

— Հինգ, — ասաց ձոռոմեանը և իսկոյն, կարծէք.

վախենալով, որ չլինի թէ ունկնդիրը փախչէ, արագ շարունակեց.— Դպրոցի լաւամուտից երևում է Վալենտինը: Բեմի խորքում երևում է թէ ինչպէս գիւղացիք իրենց ունեցածը գինեւուն են տանում:

Ինչպէս մահուան դատաւարտուած և լուսահատ ներումն ստանալու շնորհից, Բարսեղեանն այլ ևս չէր սպասում վախճանին, ոչ մի բանի լոյս չունէր, այլ միայն աշխատում էր որ աչքերը հուպ չգան և գէտքից ուշադրաւ արտայայտութիւնը չփախցնէ... Ապագան՝ թէ տիկինը երբ կաւարտէ դրաման և կերթայ, նորա աչքում այնքան հեռու էր թուում, որ նա այդ մասին չէր էլ մտածում:

— Տրու-տու-տու-տու... — զարկում էր նորա թմբկաթաղանթին ձողովեանի ձայնը: Տրու-տու-տու... ժժժժ...

«Մոռացալ սօդա ընդունեմ» մտածում էր նա: «Ի՞նչ էի մտածում... Հա, սօդա... Ըստ երևոյթին, ստամոքսի խանգարումն ունիմ... Զարմանալի չէ, Քաբաբեանը ամբողջ օրը օդի է տնկում և մինչև այսօր էլ ստամոքսի խանգարում չունի... Լուսամուտի առաջ ինչ-որ թուշուն է նստել... ճնճղուկ է»...

Բարսեղեանը լարեց իւր ուժերը, որպէս զի փակուող կոպերն իրարից բաժանէ, յօրանչեց՝ առանց բերանը բանալու և նայեց ձողովեանի վերայ: Վերջինս իւր աչքերում այլ ևս սլարզ չէր երևում այլ ևս, պատուած էր շամսնդաղով, օրօրւում էր այս ու այն կողմ, դարձաւ երեք գլխանի, գլուխը հասաւ առաստաղին...

— Վալենտին.— Ոչ, թոյլ տուէք, երթամ ես...
Օր. Սաթ. (վախեցած).— Ինչո՞ւ.— Վալենտ. (մի կողմ).
— Նա գունատուեցաւ: (նորան) Մի ստիպէք ինձ, որ պատճառները բացատրեմ: Աւելի շուտով կմեռնեմ ես, քան դուք կիմանաք այդ պատճառները:— Օր. Սաթ.
(մի փոքր սպասելով).— Դուք չէք կարող երթալ...

ձողովեանն սկսեց ուռչել, ուռաւ դարձաւ մի ահագին բան և միաւորուեցաւ առանձնասենեակի գորշագոյն օդի հետ. երևում էր միայն նորա բաց ու խուփ լինող բերանը. լետոյ նա, լանկարծ, շատ փոքրա-

ցաւ, դարձաւ մի շէն չափ, օրօրուեցաւ և սեղանի հետ միասին սենեակի խորքն անցաւ...

— Վալենտին (Սաթենիկին գրկած). Դու լարու-
թիւն տուիր ինձ, ցոյց տուիր կեանքի նպատակը: Սա-
թիկս, դու ինձ նորոգեցիր և թարմացրիր, ինչպէս
գարնանային անձրևը նորոգում և թարմացնում է
քնէած գետինը: Բայց... ուշ է, շատ ուշ է: Անբուժե-
լի հիւանդութիւնը արդէն ուտում մաշում է իմ կուրծքս:

Բարսեղեանը լանկարծ վեր թռաւ և նայեց ձուռ-
մեանին քնաթաթախ, պղտոր աչքերով: Մի րոպէի չափ
նա անշարժ և անթարթ նայում էր, կարծէք, ոչինչ
չէր ըմբռնում...

— Տեսարան ծԱ: Մի և նոյն անձինք. կոմսը, ոս-
տիկանական պաշտօնեայ, գիւղական ծերունի — հասկա-
ցողների հետ... — Վալենտին. — Ձերբակալեցէք ինձ: Օր.
Սաթ. — Ես նորանն եմ. ձերբակալեցէք և ինձ: Այո՛,
ինձ ևս ձերբակալեցէք: Ես սիրում եմ նորան, սիրում
եմ կեանքիցս աւելի. — Կոմսը. Օրիորդ, դուք մոռանում
էք, որ դորանով ձեր հօրը գերեզման էք իջցնում...

ձուռմեանը նորից սկսեց ուռչել... վայրենի, կա-
տաղի հայեացքով Բարսեղեանը տեղից վեր թռաւ, գո-
ռաց ամբողջ կրծքով, ինչ-որ անբնական ձայնով, լա-
փըշտակեց սեղանի վրայ գտնուող ծանր պլեւ-պապիէն
և, չիմանալով թէ ինչ է անում, առանց հաշիւ տալու
ինքն իրեն, ամբողջ թափով զարկեց նորանով ձուռ-
մեանի գլխամիջին...

— Կապեցէք և ինձ, ես սպանեցի սորան, — ասաց նա.
մի րոպէից յետոյ ներս վազող ծառային:

Երգուեալների դատարանը արդարացրեց նորան:

Տ. Վ.

